# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԼՈՒՍԱԳՅՈՒՂ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

---

Հայաստանի Հանրապետության Արմավիր մարզի Լուսագյուղ համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ.Լուսագյուղ, (093) 570336, lusagyugh.armavir@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

01 ՄԱՐՏԻ 2018թվականի N 06

### ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈՓՈԽՎԱԾ ՀԱՄԱՐԵԼՈՒ ԵՎ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 7-րդ հոդվածի 8-րդ մասի 3-րդ կետով, <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 43 հոդվածով, Հայաստանի Հանրապետության կառավարության 01.02.2002թ. թիվ 91 որոշմամբ հաստատված կարգի 7-րդ կետով և հիմք ընդունելով Կարեն Բեգանյանի դիմումը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Լուսագյուղ համայնքում գտնվող քաղաքացի Կարեն Բեգանյանին սեփականության իրավունքով պատկանող 04-048-0125-0020 ծածկագրի 1 հա գյուղատնտեսական նշանակության վարելահողի նշանակությունը համարել փոփոխված՝ արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության հողերի՝ ծկնալիճ կառուցելու համար:
2. Քաղաքացի Կարեն Բեգանյանին սահմանված կարգով տալ շինարարության թույլտվություն:
3. Կատարել համապատասխան փոփոխություն համայնքի հողային ֆոնդի հաշվառման տվյալներում և ամենամյա հողային հաշվեկշռում սահմանված կարգով:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** ____________________ **ՍԱՐԻԲԵԿ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ**

2018թվականի մարտի <<01>>
գ.Լուսագյուղ
ժամը՝ $12^{00}$

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
# ԼՈՒՍԱԳՅՈՒՂ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիր մարզի Լուսագյուղ համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ.Լուսագյուղ, (093) 570336, lusagyugh.armavir@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

02 ՄԱՐՏԻ 2018թվականի N 07

### ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Յայաստանի Յանրապետության օրենքի 38-րդ հոդվածի առաջին մասի 7-րդ կետով, հիմք ընդունելով Յայաստանի Յանրապետության Արմավիրի մարզի Լուսագյուղ համայնքի բնակիչ՝ Նելլի Խաչատրյանի հիվանդության էպիկրիզը.

Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ե Մ՝

1.Յայաստանի Յանրապետության Արմավիրի մարզի Լուսագյուղ համայնքի բնակիչ՝ Մարինե Գրիգորյանին մոր՝ Նելլի Խաչատրյանի բուժման նպատակով հատկացնել դրամական օգնություն՝ 50000 /հիսուն հազար/ Յայաստանի Յանրապետության դրամ գումարի չափով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

X ________________

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **ՍԱՐԻԲԵԿ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ**

2018 թվականի մարտի <<02>>
գ.Լուսագյուղ
ժամը` $13^{00}$

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
# ԼՈՒՍԱԳՅՈՒՂ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիր մարզի Լուսագյուղ համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ.Լուսագյուղ, (093) 570336, lusagyugh.armavir@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

30 ՄԱՐՏԻ 2018թվականի N 09

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԸ

ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 3-րդ հոդվածով, <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35 հոդվածի առաջին մասի 24-րդ կետով , Հայաստանի Հանրապետության կառավարության 1997թվականի մարտի 14-ի թիվ 51, 2003թվականի դեկտեմբերի 24-ի թիվ 1902-ն որոշմամբ.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Լուսագյուղ համայնքի համայնքային սեփականություն հանդիսացող Էջմիածնի խճուղի թիվ 1/2 հասցեի շինության զբաղեցրած և հետագա շահագործման համար անհրաժեշտ համայնքային սեփականություն հանդիսացող 5502քմ մակերեսով արտադրական նշանակության հողամասը հատկացնել և կցել շինությանը:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** ______________________ **ՍԱՐԻԲԵԿ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ**

2018թվականի մարտի <<30>>
գ.Լուսագյուղ
ժամը՝ $12^{00}$

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
# ԼՈՒՍԱԳՅՈՒՂ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիր մարզի Լուսագյուղ համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ.Լուսագյուղ, (093) 570336, lusagyugh.armavir@mta.gov.am

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**
07 ՄԱՐՏԻ 2018թվականի N 08

ԲՅՈՒՋԵՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի առաջին մասի 24-րդ կետով,հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Լուսագյուղ համայնքի ավագանու 2017 թվականի դեկտեմբերի 18-ի N 42-Ն որոշմամբ հաստատված հավելվածի 7-րդ և 8-րդ կետերը.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ՝

1.Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Լուսագյուղ համայնքի 2018 թվականի բյուջեի ծախսային մասում կատարել փոփոխություններ.

1/ բաժին 01, խումբ 1, դաս 1 ծրագրի 5122 հոդվածի 428,2 հազար դրամ գումարից պակասեցնել 40,0 հազար դրամ, հաստատել 388,2 հազար դրամ.

2/ բաժին 06, խումբ 4, դաս 1 ծրագրի 5122 հոդվածի 400,0 հազար դրամ գումարից պակասեցնել 400,0 հազար դրամ, հաստատել 0 դրամ,

3/ բաժին 04, խումբ 5, դաս 1 ծրագրի 5113 հոդվածի 18000,0 հազար դրամ գումարին ավելացնել 440,0 հազար դրամ, հաստատել 18440,0 հազար դրամ:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** ______________ **ՍԱՐԻԲԵԿ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԼՈՒՍԱԳՅՈՒՂ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիր մարզի Լուսագյուղ համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ.Լուսագյուղ, (093) 570336, lusagyugh.armavir@mta.gov.am

## Կ Ա Ր Գ Ա Դ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն

20 ՄԱՐՏԻ 2018թվականի N 05

ՍԱՐԻԲԵԿ ԿԱՐԱՊԵՏՅԱՆԻ ԱՐՁԱԿՈՒՐԴԸ ԵՐԿԱՐԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2018 թվականի մարտի 6-ի N 219-Ն որոշումը.

ԿԱՐԳԱԴՐՈՒՄ ԵՄ ՝

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Լուսագյուղ համայնքի ղեկավար՝ Սարիբեկ Կարապետյանի արձակուրդը երկարացնել մեկ օրով:

2. Աշխատանքի մեջ համարել 2018 թվականի ապրիլի 11-ից:

3. Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում արձակման պահից:

X

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** ____________ **ՍԱՐԻԲԵԿ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ**

2018 թվականի մարտի <<20>>
գ.Լուսագյուղ
ժամը՝ 11$^{30}$

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԼՈՒՍԱԳՅՈՒՂ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիր մարզի Լուսագյուղ համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ.Լուսագյուղ, (093) 570336, lusagyugh.armavir@mta.gov.am

## Կ Ա Ր Գ Ա Դ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

26 ՄԱՐՏԻ 2018թվականի N 06

ՉՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԱՐՁԱԿՈՒՐԴԸ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Աշխատանքային օրենսգրքի 156-րդ, 158-րդ և 159-րդ հոդվածներով և <<Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի օգոստոսի 11-ի 1384-Ն որոշման մեջ լրացում կատարելու մասին>> թիվ 190-Ն որոշմամբ, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Լուսագյուղ համայնքի ղեկավարի տեղակալ՝ Արմեն Սիմոնյանի դիմումը.

ԿԱՐԳԱԴՐՈՒՄ ԵՄ

1.Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Լուսագյուղ համայնքի ղեկավարի տեղակալ՝ Ա.Սիմոնյանին, 2018 թվականի ապրիլի 3-ից մայիսի 18-ը ներառյալ, տրամադրել 2013 և 2015 թվականների չօգտագործված արձակուրդները՝ 32 աշխատանքային օր տևողությամբ:

2.Աշխատանքի մեջ համարել 2018 թվականի մայիսի 21-ից:

3.Գլխավոր մասնագետին՝ /Լ.Աղաջանյան/ վճարումը կատարել օրենքով սահմանված կարգով:

5. Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում արձակման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ x ____________ ՍԱՐԻԲԵԿ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

2018 թվականի մարտի <<26>>
գ.Լուսագյուղ
ժամը՝ 12:30

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԼՈՒՍԱԳՅՈՒՂ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիր մարզի Լուսագյուղ համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ.Լուսագյուղ, (093) 570336, lusagyugh.armavir@mta.gov.am


## Կ Ա Ր Գ Ա Դ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն

26 ՄԱՐՏԻ 2018թվականի N 07

### ՉՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԱՐՁԱԿՈՒՐԴ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 156-րդ, 158-րդ և 159-րդ հոդվածներով և <<Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի օգոստոսի 11-ի 1384-Ն որոշման մեջ լրացում կատարելու մասին>> թիվ 190-Ն որոշմամբ, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Լուսագյուղի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարի պաշտոնի անձնագիրը և Մարինե Առաքելյանի դիմումը.

### Կ Ա Ր Գ Ա Դ Ր ՈՒ Մ  Ե Մ

1.Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Լուսագյուղի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար՝ Մարինե Առաքելյանին, 2018 թվականի ապրիլի 3-ից մայիսի 10-ը ներառյալ, տրամադրել 2007 և 2008 թվականների չօգտագործված արձակուրդները՝ 26 աշխատանքային օր տևողությամբ:

2. Աշխատանքի մեջ համարել 2018 թվականի հունիսի 11-ից:

3. Մարինե Առաքելյանի արձակուրդի մեջ գտնվելու ժամանակահատվածում նրա լիազորությունների կատարումը վերապահել նույն աշխատակազմի գլխավոր մասնագետ՝ /ծածկ. 2.3-1/ Լուսիկ Աղաջանյանին:

4. Գլխավոր մասնագետ՝ Լ. Աղաջանյանին վճարումը կատարել օրենքով սահմանված կարգով:

5. Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում արձակման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ______________ ՍԱՐԻԲԵԿ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

2018 թվականի մարտի <<26>>
գ.Լուսագյուղ
ժամը՝ 13⁰⁰

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԼՈՒՍԱԳՅՈՒՂ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիր մարզի Լուսագյուղ համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ.Լուսագյուղ, (093) 570336, lusagyugh.armavir@mta.gov.am

## Կ Ա Ր Գ Ա Դ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

28 ՄԱՐՏԻ 2018թվականի N 08

ՍԱՐԻԲԵԿ ԿԱՐԱՊԵՏՅԱՆԻՆ ԱՐՁԱԿՈՒՐԴԻՑ ՀԵՏ ԿԱՆՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Աշխատանքային օրենսգրքի 166-րդ հոդվածով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Լուսագյուղի համայնքապետ՝ Սարիբեկ Կարապետյանի համաձայնագիրը.

Կ Ա Ր Գ Ա Դ Ր Ո Ւ Մ  Ե Մ՝

1.Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Լուսագյուղի համայնքապետ՝ Սարիբեկ Կարապետյանին հետ կանչել արձակուրդից՝ 2018 թվականի ապրիլի 3-ից:

2. Ամենամյա արձակուրդի չօգտագործված մասը տրամադրել Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 167-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասերին համապատասխան:

3. Աշխատակազմի գլխավոր մասնագետին /Լ.Աղաջանյան/՝ վճարումը կատարել օրենքով սահմանված կարգով:

4. Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում արձակման պահից:

X

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ______________ ՍԱՐԻԲԵԿ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

2018 թվականի մարտի <<28>>
գ.Լուսագյուղ
ժամը՝ $12^{00}$